

ՀՀ ՎԶ մարզպետն ամփոփում է 2016թ. առաջին կասամյակի գործունեության արդյունքները

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2016 թվականին շարունակել է համայնքային այցելությունները: Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում եղել է մարզի Աղնջաձոր, Մալլի, Արփի, Գետափ, Գլաձոր, Վերնաշեն, Շատին և Հորս համայնքներում, տեղում ծանոթացել իրավիճակին: Այցելությունների շրջանակում համայնքի ավագանու, ակտիվ քաղաքացիների և համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպումներում վեր են հանվել հրատապ լուծում պահանջող համայնքային խնդիրները: Մարզային ենթակայությամբ գործող կրթական և առողջապահական հաստատությունների ղեկավարների հետ հանդիպումներում քննարկվել են ոլորտներում տիրող իրավիճակը, խնդիրների լուծման հնարավորությունները: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգման ջրի, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման և բնապահպանական այլ խնդիրների շուրջ: 2016թվականի 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 884 քաղաքացիներ:

Հ. Սարգսյանը մասնակցել է նաև ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿԶ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին, քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանում, ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

2016 թվականի առաջին կիսամյակում կազմակերպվել է ՀՀ ՏԿԶ նախարարի, ՀՀ գյուղատնտեսության և ՏԿԶ փոխնախարարների այցերը Վայոց ձորի մարզ:

Անցկացվել է Վայոց ձորի մարզխորհրդի 2016 թվականի երկու նիստերը, երկրորդը՝ ՀՀ ՏԿԶ փոխնախարարի մասնակցությամբ:

Մարզպետը մշտական ուշադրության կենտրոնում է պահել մարզային ենթակայությամբ կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների աշխատանքները՝ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Համակարգել է համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայությամբ կրթական, մարզական և մշակութային հաստատությունների գործունեությունը:

Կազմակերպվել է մարզի Գետափ համայնքի ղեկավարի հերթական ընտրությունը:

Համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Արտաքին Հարաբերություններ

Մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին, ինչպես նաև հյուրընկալել է մարզ ժամանած օտարերկրյա դեսպաններին:

Կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան՝ Ն.Գ. Իգոր Նազարուկին, ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետ Իգոր Օռլովի գլխավորությամբ և Իրանի առողջապահության նախարարի տեղակալ Ռաստուլ Դինարվանդի գլխավորած պատվիրակությանը:

Հաշվետվություն՝ 2016 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքների

Բյուջետային հատկացումներ

2016 թվականի առաջին կիսամյակում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինանսավորումը կատարվել է 1110227.4 հազար դրամ, որից 809834.8 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում: Մշակույթի ոլորտին հատկացվել է 8479.8 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 1100.0 հազար դրամ: Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 102.6 %-ով: ՀՀ 2016 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել է 477079.9 հազ. Դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2016 թվականին առաջին կիսամյակի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Մերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 50% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլեկտրոգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Առաջին եռամսյակում ընդամենը փոխհատուցվել է 16238.8 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 1417.4 հազ. դրամ, որը ֆինանսավորվել է 100%-ով:

Կրթություն

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, որոնցից 14 հիմնական, 36 միջնակարգ, այդ թվում՝ 2 վարժարան, 2 ավագ դպրոց, 1 կրթահամալիր՝ ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: Գործում է՝ մեկ ԲՈՒՀ (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը) և Եղեգնաձորի պետական տարածաշրջանային քոլեջը: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 1044 երեխաներ: Մարզում գործում է 24 նախակրթարան: Աշակերտների թիվը կազմում է 6373: Հանրակրթական հաստատություններում աշխատում են 1083 ուսուցիչներ: Մարզային ենթակայության 36 միջնակարգ դպրոցներն ունեցել են 469 շրջանավարտներ:

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով ձևավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կառավարման խորհուրդներ, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ:

Հինգ դպրոցներում (Ջերմուկի թիվ 1, Հերմոնի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Զառիթափի միջնակարգ դպրոցներ և Վայքի պետական վարժարան) սահմանված կարգով անցկացվել են գործադիր տնօրենի պաշտոնի համար մրցույթներ և ընտրվել են նոր տնօրեններ:

Հաջողությամբ իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների երեխաները դպրոցում ստանում են սնունդ:

Սահմանված կարգով կազմակերպվում են նաև դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: Կիսամյակի ընթացքում անցկացվել է 13 ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

ԴՏՏԾՀ-ի կողմից մարզի 1-ին դասարանների աշակերտներին հատկացվել են ուսումնական պլանշետներ:

Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին դասարաններում պարապոդ բոլոր դասվարները:

Փետրվար-մարտ ամիսներին անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին 16 առարկաներից մասնակցել են 7-ից 12-րդ դասարանների 606 աշակերտներ, որոնցից 42-ը ստացել են հանրապետական փուլին մասնակցելու իրավունք: Հանրապետական փուլին մասնակցած աշակերտներից 8-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Ժամանակին լրացվել և գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվել միասնական քննությունների մասնակիցների դիմում-հայտերը: Հայտավորվել են բուհերի շուրջ 200 դիմորդներ, որոնք միասնական քննություններ են հանձնել Եղեգնաձորի ավագ դպրոցում տեղակայված քննական կենտրոնում: Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 424, իսկ 12-րդ դասարանը 370 շրջանավարտներ:

4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններն ավարտած աշակերտների ավարտական փաստաթղթերն ստացվել և բաշխվել են դպրոցներին:

Ընթացքի մեջ է հերթական ատեստավորման համար ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք անցկացվում են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական և ընթերցանության մրցույթները, ինչպես նաև <<Ամենախելացին>> հեռուստատեսային մրցույթի ընտրության փուլը:

Ուսումնական պարապմունքներն ավարտվել են մայիսի 27-ին և այդ օրը դպրոցներում անցկացվել է <<Վերջին զանգ>> միջոցառումը, որին մասնակցել են նաև մարզպետարանի աշխատակիցներ և ՀՀ բանակի սպաներ:

ՄՇԱԿՈՒՅԹ

	Միջոցառման անվանումը	Ծախսերը
1	Հայրենասիրական երգերի և ազգագրական պարերի փառատոն	Պետ. բյուջե 300000 դրամ
2	Երգչախմբային փառատոն	Պետ. բյուջե 340000 դրամ
3	Մայրության և գեղեցկության տոնի նշում	Պետ. բյուջե 250000 դրամ
4	Մեծ եղեռնի 101 ամյակին նվիրված հուշ երեկո և երթ	Հովանավորներ
5	Մայիսյան հաղթանակներին նվիրված մասայական միջոցառումներ(Մայիսի – 1, Մայիսի – 8, Մայիսի – 9)	Հովանավորներ
6	Մայիսի-28 ին Հանրապետության տոնին նվիրված մասայական միջոցառում	Պետ. բյուջե 300000 դրամ
7	Վարդավառի տոնին նվիրված մասայական միջոցառում	Պետ. բյուջե 300000 դրամ
8	Երեխաների պաշպանության օրվան նվիրված միջոցառում	Հովանավորներ

Սպորտ

	Միջոցառման անվանումը	Ծախսերը
1	ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 25-րդ մարզական խաղեր (Մարտ- մայիս)	Պետ. բյուջե, հովանավորներ
2	Հանրակրթական դպրոցների Ազգային ժողովի գավաթի խաղարկություն; 1-6 դասարանցիներ (Մարտ- մայիս)	Պետ. բյուջե
3	Զոհված ազամարտիկ Վ. Վարդանյանի հիշատակին նվիրված բոնցկամարտի հուշամրցաշար	հովանավորներ
4	Շախմատի հուշամրցաշար նվիրված Հրանտ Կարապետյանի հիշատակին	հովանավորներ
5	Դպրոցականների <<Մինի Ֆուտբոլի>> հուշամրցաշար նվիրված Լյուդվիգ Հովհաննիսյանի հիշատակին	հովանավորներ
6	ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն նախադպրոցական հիմնարկ>>	Պետ. բյուջե

	մրցույթ (Մայիս- հունիս)	
7	ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>>մրցույթ (Հունիս- հուլիս)	Պետ. բյուջե

Առողջապահություն

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 610 565.3 հազար դրամ: Մատուցվել է 19752.8 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ: -2016թ. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում սկսել է գործել հեմոդիալիզի բաժանմունքը, որը սպասարկում է մարզի 6 բնակչի:

- 2016թ. հունիսի 13-ից 25-ը իրականացվել է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) և Ucom ընկերության կողմից համատեղ իրականացվող «Լույս հայի աչքերին» 2016 թվականի ծրագիրը: Մարզի բուժհաստատությունների ակնաբույժների կողմից 2016թ.-ին իրականացվել են շուրջ 1000 մեծահասակի և 810 երեխայի ակնային զննում: Ակնային զննում անցածներից 133-ը ծրագրի շրջանակում ենթարկվել են վիրահատության, իսկ 38-ը՝ լազերային միջամտության: ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջամտությամբ ծրագրի շրջանակում վիրահատության են ենթարկվել նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքների ևս 15 բնակիչ:

- 2016թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 22 քաղաքացի,

- 3 քաղաքացի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:

- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 38 մեծահասակ և 3 երեխա: 2016 թ. 1-ին կիսամյակում հաշվառվել է 297 ծնունդ, 2015 թ. 1-ին կիսամյակի համեմատ ավել է 38-ով: Մահերի թիվը 2016թ. 1 -ին կիսամյակում կազմում է 273, իսկ 2015թ. 1-ին կիսամյաում՝ 272:

Սոցիալական ապահովության բնագավառ

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Արդյունքում Հանրապետությունում նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է 13.4%, իսկ մարզում 11.4%: Առաջին կիսամյակում մարզում նպաստ է ստացել 2055 ընտանիք, որից ընտանեկան նպաստ 1549 և սոցիալական նպաստ 506 ընտանիք: Վճարվել է 339 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 133 ընտանիք, վճարվել է 10.5մլն դրամ: Մարզում կենսաթոշակատուների թիվը 10409 է, որոնց ամսական վճարվում է 414 մլն դրամ կենսաթոշակ:

Վայոց ձորի մարզի սոցիալական ապահովության տարածքային գործակալությունները ստացել են 1188 DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր, որից 1071-ը տրվել է 2015 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 30.85 և ավելի կամ միայն անաշխատունակ անդամներ ունեցող 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքներին և 117-ը ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված զինվորական ծառայողների ընտանիքներին: Մարզի ԶՏԿ -ներում 2016թ. առաջին կիսամյակում գրանցվել է 1253 գործազուրկ, որից 6 ամսվա ընթացքում 109-ը տեղավորվել է աշխատանքի:

Սոցիալական ապահովության բնագավառ

-Մարզում գրանցված են 10409 կենսաթոշակատուներ, որից Հաշմանդամներ՝ 4360

Տարիքային և այլ կենսաթոշակատուներ 5863

Տարեկան վճարվում է շուրջ 4972մլն դրամ կենսաթոշակ

Նպաստի համակարգում փաստագրվել են 3876ընտանիքներ, որից նպաստառու է դարձել 2021 ընտանիք,

11 ամիսների ընթացքում վճարվել է 633 մլն դրամ նպաստ,

Դրամական օգնություն է ստացել 165ընտանիք,

11 ամիսների ընթացքում վճարվել է 20 մլն դրամ դրամական օգնություն,

Ավանդների փոխհատուցման համար գրանցված 276 քաղաքացիներից փոխհատուցում է ստացել 254 մարդ:

Զբաղվածության տարածքային գործակալություններում գրանցվել է 1510 գործազուրկ, որից 242-ը տեղավորվել է աշխատանքի:

Ճանապարհաշինություն

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 139.9կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձևեռային պահպանման աշխատանքներ, իսկ 37.5 կմ ընթացիկ պահպանման աշխատանքներ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատությամբ հիմնադրվում է Չիվա-Ռինդ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 2.2 կմ հատվածը՝ 204 մլն դրամի չափով, որի աշխատանքները կավարտվեն երկրորդ կիսամյակում (01.10.2016թ):

Քաղաքաշինություն

2016թ-ի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրատությամբ կատարվել է 13.99 մլն. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ՝ Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերակառուցում և բարեկարգում: Աշխատանքներն ընթացքի մեջ են :

ՀՀ պետական բյուջեի միջոցներով Վայքի քաղաքապետարանի պատվիրատությամբ իրականացվել է՝

1.«Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգում - 60.0 մլն. դրամ (ավարտված է):

2.Մարզադաշտին կից այգու բարեկարգում - 60.0 մլն. դրամ (ավարտված է):

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով իրականացվել է՝

1. Մալիշկա համայնքի գազաֆիկացման ընդլայնում- 55.0 մլն. դրամ (ավարտված է):

2. Արենի համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 74.23 մլն. դրամ (ավարտված է):

3.Վերնաշեն համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 31.300 մլն. դրամ (ավարտված է):

4. Գետափ համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 95.27 մլն. դրամ (ավարտված է):

5.Ելփին համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 76.500 մլն. դրամ (ավարտված է):

6.Արին համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 99.400 մլն. դրամ (ավարտված է):

7.Ազատեկ համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 190.030 մլն. դրամ (ավարտված է):

8.Ռինդ համայնքի խմելու ջրագծի կառուցում- 310.62 մլն. դրամ (ավարտված է):

9.Ռինդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում -38.0 մլն. դրամ (ավարտված է):

10. Հերհեր համայնքի խմելու ջրագծի վերակառուցում- 283.2 մլն. դրամ (շարունակվում է) :

11.Գոմք համայնքի խմելու ջրագծի վերակառուցում- 35.7 մլն. դրամ (շարունակվում է) :

12.Աղնջաձոր համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 2.12 մլն. դրամ- (շարուն) :

13Ռինդ համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 3.2 մլն. դրամ - (շարունակվում) :

Վերջին օրերի սրբեր բարեգործական կորպորացիայի միջոցներով իրականացվել է՝

1. Ռինդ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում- 6.396 մլն. դրամ (ավարտված է):

2. Խնձորուտ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում- 3.956 մլն. դրամ (ավարտված է):

«Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի միջոցներով իրականացվել է՝

1. Շատին համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 4.5 մլն. դրամ (ավարտված է):
2. Թառաթումբ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 5.0 մլն. դրամ (ավարտված է):
3. Հորս համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 1.0 մլն. դրամ (ավարտված է):
4. Քարագլուխ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 4.0 մլն. դրամ (ավարտված է):

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

1. Զառիթափ համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում- 90.868 մլն. դրամ (շարունակվում է) :

Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել է՝

1. Գնդևազ համայնքում ոռոգման ջրագծի վերակառուցում- 96.4 մլն. դրամ (շարունակվում է) :

Բնության համաշխարային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով իրականացվել է՝

1. Եղեգնաձոր քաղաքի այցելությունների կենտրոնի կառուցում-24.0 մլն. դրամ (շարունակվում է):

Գյուղատնտեսություն

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2016 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 459.85տ ազոտական, 5.75տ կալիումական, 4.0տ ֆոսֆորական, պարարտանյութեր, 64150լ դիզելային վառելանյութ, 81տ գարնանացան գարու, 0.5տ առվույտի և 104տ աշնանացան ցորենի սերմացուներ:

2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1129 հա-ով, այսպիսով վերջին երկու տարիներին մարզի ընդհանուր ցանքային տարածությունները ավելացել են մոտ 2200 հա-ով:

2016 թվականի մայիսի 30-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 142 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 409080 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր՝ 14-24% տոկոսադրույքով, երեք տարի մարման ժամկետով և 531 գյուղացիական տնտեսությունների 392մլն. դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով: Կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 25026 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/+2448/, որից կովեր՝ 9861 /+218/ գլուխ, մանր եղջերավոր՝ 21691 (-3133), խոզեր՝ 2627 գլուխ (+578), թռչուններ՝ 116557 թև (-22882) և մեղվաբնտանիք՝ 22570/+715/ փեթակ:

Եղեգնաձոր ԶՕԸ-ի կողմից իրականացվում է ոռոգման ջրի անխափան մատակարարում:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ:

Անասնաբուժական ծառայությունների կողմից սահմանված ժամկետներում իրականացվել է պետական պատվերով նախատեսված ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումները:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 38կգ ռոդիֆակում թունանյութ մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ Մարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները:

Համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկագրի մարզում առկա է 23 հացահատիկահավաք կումբայն, որից անսարք՝ 3: Առկա գյուղատնտեսական տեխնիկական անհրաժեշտության դեպքում ըստ գոտիականությամբ մեր կողմից համակարգված տեղաշարժելու պայմաններում կարող ենք խնդիրներ չունենալ բերքահավաքը ժամանակին և անկորուստ իրականացնելու աշխատանքներում:

Տի և ՀԳՄ ոլորտ

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի,

հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

-ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

-Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2015 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները:

-Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ : Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, որոնց միջոցով համայնքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

-Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 29.12.2015 թվականի թիվ 1381-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.02.2016 թվականի թիվ 6 որոշման պահանջների 2016 թվականի առաջին կիսամյակում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Փոռի, Ագատեկի, Ջառիթափի, Գոմքի, Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի և Նոր Ազնաբերդի համայնքներում: Իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի կայքում: Արձանագրված թերություններն ու բացթողումները շտկելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական, խորհրդատվական օգնություն:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ. Համակարգվել է 2016 թվականի ապրիլի 17-ին կայացած Գետափի համայնքի ավագանու ընտրությունների գործընթացը:

-Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները:

-Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

2016 թվականի առաջին կիսամյակում հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից մարզի Փոռ, Ագատեկ, Ջառիթափ, Գոմք, Աղավնաձոր, Չիվա, Նոր Ազնաբերդ, Գլաձոր և Կարմրաշեն համայնքներում իրականացվել են տեսչական հսկողություններ:

Փոռ և Ագատեկ համայնքներում ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է ակտ, որն էլ քննարկվել է մարզպետի մոտ՝ հիշյալ համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Խախտումները վերացնելու համար տրվել է 1 ամիս ժամկետ:

Բաժնի կողմից կազմվել և ԿԱԱԳԿ պետական կոմիտե է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը: Մարզի համայնքների հողային հաշվեկշիռների կազմանը ցուցաբերվել է մասնագիտական օժանդակություն:

Քաղաքացիների դիմում բողոքներին տրվել են օրենքով սահմանված կարգով լուծումներ:

Բաժնի իրավասությունների շրջանակում ընթացք է տրվել Արենի և Ռինդի միջհամայնքային սահմանների հողային վեճի լուծմանը: Առաջին կիսամյակի ընթացքում հողերի օգտագործման

Ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 24 հոդաշինարարական գործ:

Արդյունաբերություն

2016թ. 1-ին կիսամյակում Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 7.8 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 8.1 մլրդ. դրամի արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 8 % :

-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով: Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

-Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (ՌԻբմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1200 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 44 համայնքներում: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ Էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամազցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

2015 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2016 թվականի առաջին կիսամյակում մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվն ավելացել է 300-ով կամ 2%-ով:

Աուդիտի բաժին

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2016թ.-ի 1-ին կիսամյակի ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 17 աուդիտ, որից 11 միավոր մարզային ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 4 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՊՈԱԿ-ներում, 1 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ում, 1 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց: ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ում իրականացվել է ֆինանսական աուդիտ, մարզպետարանի աշխատակազմում՝ գնումների գործընթացի գնումների օրենսդրության համապատասխանության աուդիտ՝ գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ: Նշված ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ում և գնումների գործընթացի աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 4 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, առողջապահական

ՓԲԸ-ի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ, ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատանքների կազմակերպման առաջին նախապայմանը ոլորտի տեղեկատվական շտեմարանի թարմացումն է, որն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին: Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2016 թվականին 1-ին կիսամյակում մարզում կատարվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 20 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է <<Նորք>> տեղեկատվական կենտրոնում: Ըստ ուսումնասիրության մարզում 2016 թվականի առաջին կիսամյակում հաշվառված է 118 հաշմանդամ երեխա, որից Եղեգնաձորում՝ 75, Վայքում՝ 30, Ջերմուկում՝ 13-ը:

<< Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին >> ՀՀ օրենքի պահանջների համաձայն Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության և մարզպետարանի վկայագրման հիման վրա 2016թ. առաջին կիսամյակում վկայագրվել է 2 և վերավկայագրվել 22 երեխա:

Մարզի տարածքում հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնացված հաշվառման է վերցվել տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա, սոցիալապես անապահով 2 երեխա ուղղորդվել է ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոն, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2-ը, բաժնի աջակցության շնորհիվ գիշերօթիկ հաստատության 2 աշակերտի տրամադրվել է ամառային ճամբարի ուղեգիր:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են՝ 2016 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվող 4 անչափահաս դուրս է եկել հաշվառումից: Իրավունքների պաշտպանության նպատակով բաժինը մասնակցել է 4 իրավախախտի գործի հարցաքննության: ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիկինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ մարզի ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված երեխաներ:

Համայնքներ է ուղարկվել շրջաբերական նամակ՝ ծննդի պետական գրանցում չունեցող երեխաներին բացահայտելու համար: Ստացված տեղեկատվության հիման վրա մարզում ծննդյան վկայական չունեցող երեխաներ չկան:

Տնային այցելությունների, համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համատեղ աշխատանքների շնորհիվ մարզի 37 ընտանիքների տրվել է խորհրդատվական, դրամական և նյութական աջակցություն մարզպետարանի, հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը կոորդինացնում է գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքները՝ կիսամյակում հրավիրվել է 2 նիստ:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող մարզային և միջազգային հասարակական կառույցների («Շուշան», «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն», «Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն», «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղ, «Երեխաների պաշտպանության ցանց >>, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն»>>, «ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ»>>, «Սեյվ դը չիլդրեն»>>) հետ, մասնակցել նրանց կազմակերպած հանդիպումներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կլոր սեղանների անցկացմանը, օգտագործել նրանց հնարավորությունները՝ 17 սոցիալապես անապահով ընտանիքների աջակցություն տրամադրելու գործում:

ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 8 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած 10 դիմումներին տվել համապատասխան լուծում:

Հանրային իրազեկում

2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնը կազմակերպել է մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով՝ «Նորություններ»>> բաժնում տեղադրելով 178 լուսաբանական նյութ և սպասարկելով կայքի 23 բաժինների 124 ենթաբաժինները, տարվա ընթացքում՝ 325: Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնը կազմակերպել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի ասուլիսը, նվիրված 2015 թվականի գործունեության արդյունքների ամփոփմանը:

[ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://vdzor.mtad.am/ ճանաչվել է տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք](http://vdzor.mtad.am/) 30.09.2016

Հաշվետու ժամանակահատվածում պաշտոնական կայքի բաժիններում անհրաժեշտաբար բացվել են նոր ենթաբաժիններ.

«Դիմեք մեզ»>> բաժնում բացվել է՝ «ՏՄ մասին ՀՀ օրենք, 7-րդ հոդված՝ Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը»>>, «Տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն»>>, «Քաղաքացիների կողմից մարզպետարան առաքված դիմումների, բողոքների վերաբերյալ վիճակագրություն»>>, «ՀՀ ՎՁ մարզպետին և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին դիմելու ձևաթղթեր»>> բաժինները, «Մարզպետարան»>> բաժնի «Համագործակցություն»>> ենթաբաժնում նոր ենթաբաժին՝ «Սոցիալական համագործակցություն»>> վերնագրով, «Ծրագրեր և փաստաթղթեր»>> բաժնի «Գնումներ»>> ենթաբաժնում նոր ենթաբաժիններ՝ «Մրցութային հանձնաժովների նիստերի արձանագրություններ»>> և «Հաշիվ ապրանքագրեր և արձանագրություններ»>> վերնագրերով:

Բաժինն այդ ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումն ապահովելու նպատակով համագործակցել է նաև մարզային «Վարդաձոր»>>, «ԱգրոԿամուրջ»>> ամսաթերթի, և «Հայաստանի Հանրապետություն»>> օրաթերթի և Վայոց ձորի թեմի պաշտոնական կայքի հետ:

2016 թ-ի II-րդ կիսամյակում նախատեսված ծրագրեր

Ճանապարհաշինություն` ՀՀ պետությունների միջոցներով` ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ`

1. Արենի-Խաչիկ ավտոճանապարհի երեք ոլորանների հիմնանորոգում, գումարը` 79 մլն դրամ:
2. Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 159+200 հատվածում կամրջի հիմնանորոգում, գումարը` 23.8 մլն դրամ:
3. Գնդեվազ համայնքի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում, գումարը` 88.9 մլն դրամ:
4. Ջերմուկ քաղաքի գործարանային փողոցի և հարակից մայրերի վերագործում, գումարը` 59.9 մլն դրամ:

Համայնքին տրամադրված սուբվենցիայի գումարով`

1. Վարդահովիտի ներհամայնքային փողոցների բարեկարգում, գումարը` 15 մլն դրամ:

2016թ երկրորդ կիսամյակում իրականացվող քաղաքաշինություն շարունակական ծրագրեր`

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով իրականացվում է`

1. Ազատեկ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում- 143.730 մլն. դրամ-աշխատանքներն սկսվել են
2. Հերիեր համայնքի խմելու ջրագծի վերակառուցման շարունակությունը- 67.2 մլն. դրամ – աշխատանքներն կավարտվեն 30.05.2017թ.
3. Գոմբ համայնքի խմելու ջրագծի վերակառուցման շարունակությունը- 32.0 մլն. դրամ – աշխատանքներն կավարտվեն 30.06.2017թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով կիրականացվի

1. Զառիթափ համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման շարունակությունը- 32.9 մլն. դրամ- աշխատանքներն կավարտվեն 28.11.2016թ.

Գյուղ նախարարության ՄԻԳ ՊՀ-ի միջոցներով կիրականացվի

1. Աղնջաձոր համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցման շարունակությունը- 40.28 մլն. դրամ-աշխատանքներն կավարտվեն 30.09.2016թ.
2. Ռինդ համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցման շարունակությունը- 60.8 մլն. դրամ -աշխատանքներն կավարտվեն 01.12.2016թ.

Բնության համաշխարային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով կիրականացվի

1. Եղեգնաձոր քաղաքի այցելությունների կենտրոնի կառուցման շարունակությունը -6.447 մլն. դրամ-աշխատանքներն կավարտվեն 15.08.2016թ.

Համայնքային բյուջեի միջոցներով կիրականացվի

1. Գնդեվազ համայնքում ոռոգման ջրագծի վերակառուցման շարունակությունը- 24.1 մլն. դրամ:

Հիմնախնդիրներ`

Հիմնախնդիրները մնացել են նույնը:

ա) Ոռոգելի տարածությունների ընդարձակում (մարզում վարելահողերի միայն 18%-ն է ոռոգելի), անհրաժեշտ է կառուցել Խաչիկի և Ելփինի ջրամբարները:

բ) Գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածություն: Փորձ է արվում գյուղատնտեսական տեխնիկայի պակասը լուծել կոոպերատիվների ստեղծման միջոցով:

գ) Հակակարկտային կայանների տեղադրում (մարզում առկա 6 հակակարկտային կայանների միջոցով հնարավոր չէ պայքարել կարկտահարության դեմ` տարեկան վնասը կազմում է մոտ 300-350 մլն.դրամ):

«Վիվա-Սել» ՄՏՄ–ի բարեգործությամբ իրականացվում է մարզի սահմանամերձ Խաչիկ գյուղում 3 առանձնատան կառուցման աշխատանքներ 10.5 մլն.դրամի և 2 առանձնատան հիմնանորոգում 2.0 մլն. դրամ:

«Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ի միջոցներով մարզի 8 համայնքներում, այդ թվում Ելփին, ՉԻՎԱ, Արենի, Խաչիկ, Արփի, Արտաբույնք, Հորբատեղ և Ագարակաձոր իրականացվում է փոքրածավալ շինարարական աշխատանքներ 31.377 մլն. դրամի, ներառյալ համայնքների կողմից կատարվող համաֆինանսավորումը:

Նախատեսվում է փոքրածավալ շինարարական աշխատանքներ իրականացնել նաև «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ –ի միջոցների հաշվին Արփի համայնքում մրգի սառնարան, Ջառիթափ և Գնդեվազ գյուղերում կաթի հավաքման կետ, Ռինդ, Չիվա և Ելփին գյուղերում ոռոգման ծրագրեր և Հորսում անասնախմոցների տեղադրման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով կատարվել է Ջառիթափ համայնքի խմելու ջրի հիմնանորոգման աշխատանքները: ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են :

Ջերմուկ քաղաքում կոյուղագծի վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են, որի արժեքը կազմում է 664916.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 02.07.2015թ համար 766-ն որոշմամբ մարզին առաջնահերթ լուծում պահանջվող հիմնախնդիրների լուծման համար հատկացվել է 300 մլն դրամ /աղյուսակը կցվում է/:

ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներով ՀՀ կառավարության 18.07.2015թ. N 673-ն որոշումով Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերականգնման, բարեկարգման աշխատանքներ - 157.666 հազ. դրամ:

ՀՀ կառավարության Պահուստային ֆոնդից հրատապ ծրագրով հատկացված ֆինանսավորմամբ մարզի Ջերմուկ, Եղեգնաձոր և Վայք քաղաքային, Գետափ, Հորս, Թառաթումբ, Գնիշիկ, Չիվա գյուղական համայնքներում կիրականացվի ընդհանուր թվով՝ - 193506.0 հազ. դրամի շինվերանորոգման և կառուցապատման աշխատանքներ:

ՀՄՆՀ-ի միջոցներով կիրականացվի Ջառիթափի մանկապարտեզի հիմնանորոգումը (165000.0 հազ. դրամ):

Գյուղական համայնքների տնտեսական զարգացման ծրագրով Գլաձոր, Ագարակաձոր, Ռինդ, Արենի, Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արին, Ազատեկ, Ռինդ համայնքներում կիրականացվի հիմնականում ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման և կառուցման աշխատանքներ՝ ընդհանուր թվով՝ 1324827.5 հազ. դրամի: